ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 171-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԽՈՐԴԱՆՈՑԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 21.04.2023թ. N 101-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 18052023-06-0046 վկայականը,վճարման անդորրագրերը և հաշվի առնելով որ, Արտակ Լևոնի Զավարյանը ընդունել է խորդանոցը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները՝

Որոշում եմ.

1. Թումանյան համայնք,քաղաք Թումանյան, 2-րդ փողոց, 8/28 հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 21.04.2023թ N 101-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 72.43 քմ արտաքին մակերեսով (67,5քմ ներքին մակերեսով) խորդանոցը՝ 38822.48 (երեսունութ հազար ութ հարյուր քսաներկու դրամ քառասունութ լումա) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.00769 հա մակերեսով հողամասը՝ 10912.11 (տասը հազար ինը հարյուր տասներկու դրամ տասնմեկ լումա) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով օտարել Արտակ Լևոնի Զավարյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23թ. հունիսի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 172-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԼՈՌՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-045-0060-0006 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍԱՐՈ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ,ՍՈՒՍԱՆ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ, ՍԵՐԻՆԵ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ԵՎ ՍՎԵՏԱ ՍԱՆԱՍԱՐԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտ արված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հաշվի առնելով, որ Սարո Սանասարի Սարիբեկյանի,Սուսան Սանասարի Սարիբեկյանի,Սերինե Սանասարի Սարիբեկյանի և Սվետա Սանասարի Սարիբեկյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը,բնակելի տան բաց պատշգամբը և անասնաշենքը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք ,հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված բնակելի տան,բնակելի տան բաց պատշգամբի և անասնաշենքի հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 20238JTQGW տրված՝ 26.05.2023թ., հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 14.02.2023թ. վճիռը /Գործ թիվ ԼԴ2/1180//02/2019/ և քաղաքացի Սարո Սանասարի Սարիբեկյանի /մուտք 14.04.2023թ. թիվ 192/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Հաշվի առնելով չափագրման տվյալների մուտքագրման 2023RESQQH ծածկագիրը՝ Օրինականացնել ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Սարո Սանասարի Սարիբեկյանին,Սուսան Սանասարի Սարիբեկյանին,Սերինե Սանասարի Սարիբեկյանին, Սվետա Սանասարի Սարիբեկյանին պատկանող Թումանյան համայնք, գյուղ Լորուտ, 06-045-0060-0006 կադաստրային ծածկագից առանձնացված 0,10762հա մակերեսով՝ /որից 0,02849 հա ընդհանուր օգտագործման/ հողամասում ինքնակամ կառուցված ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված 44,9 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը,բնակելի տան բաց պատշգամբը, աստիճանահարթակը և 30,5քմ արտաքին մակերեսով անասնաշենքը:
2. Սարո Սանասարի Սարիբեկյանին՝ համայնքապետարանի 900265127267 հաշվեհամարին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճարել 28819,20ՀՀ դրամ, որից 44,9քմ ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տան,բնակելի տան բ/պ և աստիճանահարթակի օրինականացման համար՝ 20474,4 ՀՀ դրամ և 30,5քմ արտաքին մակերեսով անասնաշենքի օրինականացման համար՝ 8344,80 ՀՀ դրամ:
3. Վերջիններիս վճարման անդորրագրերը հանդիսանում են սույն որոշման անբաժանելի մասը:
4. Լորուտ գյուղի կադաստրային քարտեզի 06-045-0060-0006 ծածկագրից առանձնացված 44,9 քմ մակերեսով բնակելի տանը և 0,10762 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել նոր փոստային << ՀՀ Լոռու մարզ, Թումանյան համայնք, գ. Լորուտ, 9-րդ փողոց, 32 բնակելի տուն>> հասցե:
5. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 173-Ա

ՀՈՎՆԱՆ ԲՈՐԻՍԻ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 7-ի թիվ 23-Ա որոշումը, սեփականության իրավունքի N 16062020-06-0066 և 2023 թվականի հունիսի 9-ի <<Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը մրցույթով վարձակալության տալու մասին>> թիվ 9 արձանագրությունը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող 06-045-0173-0026 ծածկագրի գյուղատնտեսական նշանակության 0,4 հա մակերեսով արոտավայրը 11000 /տասնմեկ հազար/ՀՀ դրամ վարձավճարով, 25 տարի ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրել մրցույթում հաղթող ճանաչված Հովնան Բորիսի Բեգլարյանին /ծնված՝15.07.1981թ/:
2. Հովնան Բորիսի Բեգլարյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր, որը օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:
3. Հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում
4.Նախազգուշացնել մրցույթի հաղթողին, որ հողատարածքի վարձակալության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:
5. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 15
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 174-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.05.2023Թ N 135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 01.06.2023թ. Կ-01062023-06-0082 գույքի նկատմամբ (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը՝
Որոշում եմ.

1. Թումանյան համայնքի ղեկավարի 26.05.2023թ. «ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՍԵՂ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ, ԽՈՏՀԱՐՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 135-Ա որոշման 3-րդ կետում գրված՝ «0.48056 հա» հողամասի մակերեսի չափը փոխարինել՝ «0.46805 հա» հողամասի մակերեսի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

20 23 թ. հունիսի 16
ք.Թումանյան